

ԴԱՊԵՆԱԿԱՆ ՈՏՆԱՇԵՏՔԵՐ




Վաեպիք Իսահակյանը մի առիթով Հովհաննես Շիրազին ասել էր. «Շիրազ ջան, Օհաննեսն (Հովհաննես Թումանյան.- Շ.Պ.) ուզում էր, բայց չհասցրեց, քանի որ դու է Օհաննես ես, այն էլ դեռևս մատաղ աղբյուր, մփածիր մի պոեմ գրել Անիի մասին»:

Էականն այն չէ՝ Վարպետի հորդորո՞վ գրվեց «Անի» պոեմը, թե՛ Շիրազը պարզապես չէր կարող Անիին չանդրադառնալ: Էականն, անշուշփ, այդ պոեմի աշխարհ գալն էր՝ փառահեղ մի գործ՝ Անիի կարուղով, Անիի հանդեպ ընթերցողի մով բարի վերաբերմունք սերմանող զգացումներով: Յուրաքանչյուրը, ում ծանոթ է Շիրազի այդ պոեմը, Անի այցելելիս շուրթերին ունի պոեմի գողերն ու «Անիի» նախերգանքի հիման վրա գրված երգը: Դա մի գետակ կարծես թե նախապատրաստություն է՝ Անի այցելողի մով կարգավորելու հոգեկան այն ապրումը, որ առաջանալու է երեսմի այդ շեն քաղաքի ներկա ավեր վիճակը գետսնելուց:

Որպե՞ս և ե՞րբ են Թումանյանն ու Իսահակյանը գրուցել Անիի մասին, և արդյո՞ք հենց Անիում եղած ժամանակ է Թումանյանն արգահայտել Անիի մասին պոեմ գրելու մրագորությունը: Ունենայի՞նք հիմա մեր գրականության երկու մեծերի այդ գրույցի սղագորությունը լիովին՝ ի՞նչ են խոսել նրանք Անիի մասին, ինչպես են նրանք կիսել իրենց գրագորությունները: Լսոն Հախվերդյանը, Իսահակյանին նվիրած իր գրքում որոշ վկայություններ բավիս է: Անգամ մի լուսանկար է գրեղադրել, որը Թումանյանն ու Իսահակյանն են պակերպված Աշոր Ռոդրիմածի գուպանաքարի մով: Դա եղել է 1901 թվականին: Գուցե այսպե՞ս են նրանք գրուցել «Անիին ձոնված պոեմի» մասին, որ փափագել է գրել Հովհաննես Թումանյանը:

Թումանյանը մեծ ցավ է ապրել Անիի ավերակներում. «Ինչքա՞ն մարդ պիտի անբանականառուն լինի, որ ձեռք բարձրացնի այս հրաշալիքների վրա», - ասել է նա:

Այդ ապրումը, այդ ցավն ու նման զգացողությունն ամեն մեկինս է, երբ շրջում ենք Անիի սուրբ հողի վրա՝ ապրելով հայ ճարպարապետության երեսմնի փառքի վկայություններին հաղորդվելու թե՛ բերկրալի զգացումը և թե՛ կորուսյալ երկրի ցավը:



ԱՆԻՆ՝ ՆԵՐԾՆՉԱՆՔԻ ԱՂԲՅՈՒՐ

«Մենք փառքեր ունենք թաղված հողի դակ,
Մենք հույսեր ունենք պահած մեր սրբում...»:
ՃՈՎՃ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ուրիշ է, եթե Ախուրյան գետի ձախ ափից (Դայասպանի կողմից) ես նայում Անիի ավերակներին, բոլորովին ուրիշ, եթե Բագրագունիների ովնահետքերին երկյուղածությամբ ես ոդք դնում, եթե մարմներով շոշափում ես եկեղեցիների ավեր պափերը, եթե ընկած նախշազարդ քարի առաջ ծնրադիր՝ Իսահակյանի կարովն ես բարձրաձայնում. «Ես պաշտում եմ քո փլափակ վանքի ամեն մի փշրված քանդակը և համբուրում եմ նրանց սրբազն մամուռը»:

Այդ զգացողության դեր ամեն հայ իրեն բախփավոր է զգում՝ մեկ անգամ գոնե լինելով Անիում: Այսպես հազարամյա հայոց պարմության քարեղեն վկայությունն է, այսպես մեր դպրությունն է՝ դրոշմված եկեղեցիների պափերին: Մի ողջ դարաշրջան ուսած այս քաղաքն իր այցելուին ազգային ակունքների հանդեպ անհուն սեր ու զգացողություն է հաղորդում, և իր փառահեղ անցյալի հանդեպ սերն ու վերաբերմունքը ինքնին ձևավորվում է այցելուի մոտ՝ հայ լինի, թե այլազգի: Այդ ընդհանրական բրամադրությունը ժամանակին ունեցել է ֆրանսիացի լեզվաբան Էմեն Պոռեն՝ «Ով որ սրբի ազքերով է նայվածք նեպում Անիի քարակերպ հմայքին, բանասփեղծ է դառնում»: Արդյո՞ք նման զգացումի, նման ներշնչանքի թելադրանք չէ Եղիշե Զարենցի ձոնը՝

«...Ես խոնարհում եմ գլուխս

հանճարի առջև ձեր անճառ,

Ո՞վ վարպետներ, որ փլիք-ձև,

կերպարանք մեր հողին:—

...Ձեր ձիրքով թռողիք աշխարհում դուք անանց

և ջինջ մի հետք,

Եվ մնացիք հավիպյան

քերթության վարպետներ անմահ...»:

1892-ին այդ ներշնչանքը խորապես ապրեց գեղանկարիչ Վարդգես Սուրենյանցը (1860-1921), եթե, որպես Գևորգյան ճեմարանի դասախոս, առաջին անգամ Ն. Մատի արշավախմբի հետ եղավ Անիում: Ներշնչանքը խորն էր, դեսաձը՝ անթեղ, արվեստագետին հասու երևակայության սահմանները՝ անշափելի: Դարյուրամյակների միջով նկարիչը «գրեսավ» կենդանի Անին. կիսավեր եկեղեցին նրա ազքերին հառնեց միջնադարյան շեն մայրաքաղաքի գործող եկեղեցի որպես, որի ելքին ազգային փարագների մեջ շենչող ու շքերաշուր հայ կանայք են: Երևակայական այդ պարկերից նկարիչը սպեղծեց իր «Անիի կանանց ելքը եկեղեցուց» կրավը (1905թ. կր. յուղ. 107x135):

Դայի համար Անին սրբափայր է, մատունք: Ամեն ընկած քար ու խոյակ հազարամյա պարմության խոսուն վկա է: Դայ ուխփավորը ժամերով է կանգնում եկեղեցու ամեն մի ընկած քարի, հրաշքով կանգուն մնացած մի ծիվ պափի մոտ, երեխա գուրգուրելու զգուշավորությամբ շոշափում վիմական արձանագրությունները, ճարպարապետական շքեղ բեկորները, նկարագարդ որմնամասերը, որ ընկած են երբեմնի շքեղաշեն եկեղեցիների պափերից:

Նոթափեդր

Ֆրանսիական բանակի սպա Ռ. Շուալեոր Արևմտյան Դայասպանում ուսումնասիրել է հայկական և հունական եկեղեցական, նաև մշակութային այլ կոլողներ: Հսկ նրա կազմած

ყեղელაգრի /1898թ./ Արևմտյան Հայասդրանում եղել է 218 հայկական վանք և 1740 եկեղեցի: 1904թ. Պոլսու պաշտոնական ყեղելագրով, Օսմանյան Թուրքիայում եղել է 228 հայկական վանք և 1958 եկեղեցի: 1919թ. Փարիզում սպորագրված հուշագրի համաձայն Թուրքիայի դարածքում նշվում են լրիվ կամ մասամբ կործանված 83 եպիսկոպոսանիստ առաջնորդարան, 1860 եկեղեցի և մագրու, 229 վանք:

Շարունակելի